

չունենք և նրախտապարտ ենք մեր հոր և մոր համար, որոնք սովորեցրել են մեզ կատարյալ վստահություն ունենալ ծրագրի հանդեպ»:

Ես խոսում եմ բոլոր նրանց հետ, ովքեր տառապում են, բոլոր նրանց հետ, ովքեր սգում են, բոլոր նրանց հետ, ովքեր դեռ կղիմակայեն փորձությունների և մարտահրավերների այս կյանքում: Իմ ուղերձն ուղղված է բոլոր նրանց, ովքեր անհանգստացած են կամ վախեցած կամ էլ հուսալքված: Իմ ուղերձն ուղղակի մի արձագանք է՝ մի հիշեցում սիրաշատ չոր կողմից Իր զավակներին ուղղված, մի մշտական մխիթարիչ խորհուրդ՝ այն ժամանակից ի վեր ինչ աշխարհի սկիզբը դրվեց:

«Հիշեք, հիշեք, որ մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, նրբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո, նրբ նրա ողջ կարկուտը և զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն զորություն չի ունենա ձեր վրա՝ քաշելու ձեզ վարձողնալի թշվառության ու անվերջ վայի անդունդը, այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի»:⁷

Ես վկայում եմ Նրա մասին, որ Նա հաղթել է աշխարհին, որ Նա երբեք չի մոռանա կամ լքի մեզ, քանի որ Նա փորագրել է մեզ Իր ձեռքերի ավերի մեջ:⁸ Ես վկայում եմ, որ նրանք ովքեր պահում են Նրա պատվիրանները, կաճեն հավատքով և հույսով, և նրանց ուժ կտրվի հաղթելու կյանքի բոլոր փորձությունները: Եվ նրանք խաղաղություն կզգան, որն ամեն մտքից վեր կլինի:⁹ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Sarah DeArmon Rich, in Carol Cornwall Madsen, *Journey to Zion: Voices from the Mormon Trail* (1997), 173–74; ուղղագրությունը արդիացված է:
2. Մորոնի 7.40–42:
3. Տես Հայտնություն Է.14–17:
4. Տես Հակոբոս 2.19:
5. Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Հավատք»:
6. «Եկեք Սրբեր», Հիմներ և մանկական երգեր, էջ 2:
7. Հեբրեան 5.12:
8. Տես 1 Նեփի 21.16:
9. Տես Փիլիպպեցիս Դ.7:



Երեց Մ. Ռասել Բալարդ

Տասներկու Առաքյալների Քվորումից

Մայրեր և դուստրեր

Այս վերջին օրերում կարևոր է, նույնիսկ վճռորոշ, որ ծնողները և երեխաները լսեն և սովորեն միմյանցից:

Երբայրեր և քույրեր, վեց ամիս առաջ ես քահանայության նիստում իմ խոսքն ուղղեցի հայրերին և որդիներին: Ինչպես հավանաբար ենթադրում եք, իմ 5 դուստրերը, 24 թոռնուհիները և անընդհատ մեծացող ծոռուհիների թիվը պահանջում են հավասար ուշադրություն: Այսպիսով, այսօր ես կուղղեմ իմ խոսքը հիմնականում Եկեղեցու մայրերին և դուստրերին:

Իմ սիրելի կինը՝ Բարբարան, հավերժական կարևորության ազդեցություն է ունեցել մեր դուստրերի և թոռնուհիների վրա, իսկ նրանք էլ, իրենց հերթին, նրա վրա: Մայրերն ու դուստրերը վճռորոշ դեր են խաղում՝ օգնելով միմյանց գործադրել իրենց անսահման հնարավորությունները, չնայած աշխարհի կործանարար ազդեցություններին, որոնցով կանացի սեռը և մայրությունը այլասերվում է և նենգափոխվում:

Ստուավորապես մեկ դար առաջ իր խոսքն ուղղելով Եկեղեցու կանանց, Նախագահ Չոզենֆ Ֆիլդինգ Միթթն ասել է. «Աշխարհիկ կանանց կողմից առաջնորդվելը ձեզ համար չէ, ձեզ համար է ... առաջնորդել աշխարհիկ կանանց այն ամենում, ինչն արժանի է զովասանքի, ինչն Աստվածահաճ է, ինչ վեհացնող է և ... մարդկանց զավակներին սրբագործող» (*Teachings of Presidents of the*

Church: Joseph F. Smith [1998], 184):

Քույրեր, մենք՝ ձեր եղբայրները, չենք կարող անել այն, ինչ աստվածայնորեն նշանակված է անել ձեզ աշխարհի հիմնադրումից առաջ: Մենք կարող ենք փորձել, բայց մենք չենք կարող երբևէ հուսալ կրկնօրինակել ձեր անգուգական պարզեցումը: Այս աշխարհում չկա ոչ մի բան այնքան անձնական, այնքան դաստիարակչական կամ այնքան կյանքը փոխող, որքան արդարակյաց կնոջ ազդեցությունն է:

Ես հասկանում եմ, որ ձեզանից ոմանք՝ երիտասարդ կանայք, չունեն մայրեր, ում հետ կկարողանալին քննարկել այս հարցերը: Եվ ձեզանից շատերը, կանայք, ներկայումս չունեն դուստրեր: Բայց քանի որ *բողոք* կանայք իրենց աստվածային էությանը ունեն ինչպես բնածին տաղանդ, այնպես էլ մայր լինելու պարտավորություն, իմ խոսքերի մեծ մասը վերաբերվում է հավասարապես տատիկներին, հորաքույրներին, քույրերին, խորթ մայրերին, զոքանչներին, ղեկավարներին և այլ դաստիարակներին, ովքեր մայր-դուստր այս կարևոր հարաբերություններում երբեմն լցնում են ճեղքվածքները:

Երիտասարդ կանայք, ձեր մայրերը պաշտում են ձեզ: Նրանք տեսնում են ձեր մեջ ապագա սերունդների խոստումը: Ամենը, ինչ դուք իրագործում եք, ամեն

մարտահրավեր, որ դուք հաղթահարում եք, բերում է նրանց ջինջ ուրախություն: Եվ նմանապես *ձեր* մտահոգություններն ու դառնությունները *նրանց* մտահոգություններն են ու դառնությունները:

Այսօր երիտասարդ կանայք, ես ցանկանում եմ տալ մի քանի առաջարկ, թե ինչպես ձեր մոր հետ ձեր փոխհարաբերությունից լիովին օգուտ քաղել: Իսկ այնուհետև ես ունեմ մի քանի խոսք կիսելու մայրերի հետ, թե ինչպես նրանք կարող են առավելագույնի հասցնել իրենց ազդեցությունը՝ իրենց դուստրերի և իրենց ընտանիքների մյուս անդամների վրա:

Դժբախտաբար շատ հեշտ է բացատրել կանացի սեռի այդ ողջ յառնաշփոթությունն ու աղավաղումը ժամանակակից հասարակության մեջ: Անհամեստ, անբարոյական, անգուսպ կանայք, որոնք լցնում են շաղիո և հեռուստատեսային ալիքները, մեռնաշողիացման են ենթարկում ամսագրերը և հայտնվում կինոէկրաններին, ողջ ժամանակ փառավորվելով աշխարհի կողմից: Պողոս Առաքյալը խոսել է մարգարեաբար «վտանգավոր ժամանակների» մասին, որոնք կգան վերջին օրերում և առանձնապես ակնարկում մի բանի մասին, որը հատկապես վտանգավոր էր թվացել նրան. «տկարամիտ կնիկներին, որ կերպ կերպ ցանկություններով վարուած են» (Բ Տիմոթեոս Գ.1,6): Այսօրվա հանրահայտ մշակույթը հաճախ ստիպում է կանանց երևալ հիմար, աննպատակային, անմիտ և անգոր: Այն մարմնավորում է նրանց և պատվազրկում, իսկ հետո ենթադրում, որ նրանք կարող են թողնել իրենց հետքը մարդկության վրա միայն հրապուրանքի միջոցով՝ այլասերվածության ամենավտանգավոր ուղերձ, որը հակառակորդն ուղարկում է կանանց՝ իրենց վերաբերյալ:

Եվ այսպես, իմ սիրելի երիտասարդ կանայք, ողջ իմ սրտով ես հորդորում եմ ձեզ չնայել ժամանակակից մշակույթին՝ ձեզ համար ընդօրինակման մոդել կամ դաստիարակներ գտնելու նպատակով: Թնդորում եմ նայել ձեր հավատարիմ մայրերի օրինակին՝ նրանց հետևելու համար: Չեմ ակնարկում:



ձեզ *նրանց* նմանությամբ, ոչ թե հռչակավորների օրինակով, որոնց չափանիշները և արժեքները հավանաբար չեն արտահայտում հավերժական հեռանկարը: Նայել ձեր մայրիկին: Սովորել նրա ուժից, նրա քաջությունից և նրա հավատարմությունից: Լսել նրան: Նա կարող է վարպետ չլինել ուղերձներ գրելիս, նա գուցե նույնիսկ էջ չունենա Facebook-ում: Բայց ինչ վերաբերվում է սրտի և Տիրոջ բաներին, նա ունի գիտության հարստություն: Երբ մոտենում եք ամուսնությանը և երիտասարդ մայր դառնալուն, նա կլինի ձեր մեծագույն իմաստության աղբյուրը: Աշխարհում ոչ մի ուրիշ մարդ չի սիրում ձեզ այն նույն ձևով կամ կամենում գոհաբերել այնքան շատ՝ ձեզ քաջալերելու և օգնելու երջանկություն գտնել այս կյանքում և հավիտենականության մեջ:

Միքն ձեր մորը, իմ երիտասարդ քույրեր: Հարգել նրան: Լսել նրան: Վստահել նրան: Նրա սրտին մոտ են բոլոր ձեր հետաքրքրությունները: Նա հոգ է տանում ձեր հավերժական ապահովության և երջանկության համար: Այսպիսով, բարի եղել նրա հանդես: Եղել համբերատար նրա թերությունների նկատմամբ, քանի որ նա ունի դրանք: Մենք բոլորս ունենք :

Այժմ, մայրեր, կարո՞ղ եմ կիսվել ձեզ հետ մի քանի մտքերով այն հատուկ դերի մասին, որ դուք եք

խաղում ձեր դուստրերի կյանքում: Մենք ունենք մի ընտանիքի բարեկամ, որը հաճախ ճանապարհորդում է իր հեռու ազգականների հետ: Նրա հիմնական դիտարկումը յուրաքանչյուր ուղևորությունից հետո այն է, թե որքան են երիտասարդ կանայք վարվելակերպով նման իրենց մայրերին: Եթե մայրերը տնտեսող են, այդպիսին են նրանց դուստրերը: Եթե մայրերը համեստ են, այդպիսին են նրանց աղջիկները: Եթե մայրերը կրում են անփույթ հագուստներ հաղորդության ժողովին, այդպես են անում նաև նրանց դուստրերը: Մայրեր, ձեր օրինակը չափազանց կարևոր է ձեր դուստրերի համար, նույնիսկ եթե նրանք դա չեն ընդունում:

Աշխարհի պատմության ընթացքում կանայք միշտ բարոյական արժեքների ուսուցիչներ են եղել: Այդ ուսուցումը սկսվում է օրորոցից և շարունակվում նրանց երեխաների կյանքի ընթացքում: Այսօր մեր կյանքը շրջափոխվում է կանանց սեռի և մայրության վերաբերյալ ուղերձներով, որոնք սպառնալի են և չարամտորեն սխալ: Այդ ուղերձներին հետևելը կարող է ձեր դուստրերի ոտքը դնել մեղքի և ինքնակործանման ուղու վրա: Ձեր դուստրերը գուցե չհասկանան այդ, մինչև դուք նրանց չասել, կամ ավելի լավ է, մինչև դուք ցույց չտաք նրանց, թե ինչպես կատարել լավ ընտրություններ: Որպես մայրեր Իսրայելում, դուք ձեր դուստրերի պաշտպանության առաջին գիծն եք աշխարհի խաբեությունների դեմ:

Այսպիսով, մայրեր, ես հասկանում եմ, որ երբեմն թվում է, որ մեր երեխաներն ուշադրություն չեն դարձնում այն դասերին, որոնք մենք փորձում ենք ուսուցանել նրանց: Հավատացել ինձ, ես տեսել եմ այդ ապակիացած հայացքը, որը հայտնվում է դեռահասների աչքերում, հենց այն պահին, երբ դուք սկսում եք ասել այն, ինչը ձեր ուսուցման ամենակարևոր մասն է: Թույլ տվել հավաստիացնել ձեզ, որ նույնիսկ, երբ մտածում եք, թե ձեր դուստրը չի լսում ձեր ասած ոչ մի խոսքին, նա միևնույն է սովորում է ձեզանից, երբ հետևում է ձեզ՝ տեսնելու, թե ձեր գործողությունները



համապատասխանում են ձեր խոսքերին: Ինչպես Ռալֆ Վալդո Էմերսոնն է ասել. «Այն, ինչ դուք անում եք, այնքան բարձր է խոսում, որ ես չեմ կարողանում լսել, այն ինչ դուք ասում եք» (տես Ralph Keyes, *The Quote Verifier* [2006], 56):

Սովորեցրեք ձեր դուստրերին ուրախություն գտնել նրեխաներ խնամելիս: Սա է այն տնողը, որտեղ նրանց սերը և տաղանդները կարող են ունենալ մեծագույն հավերժական նշանակություն: Մտածեք այս ենթատեքստում Նախագահ Հարոլդ Բ. Լիի պատգամի մասին. «Ամենակարևոր ... աշխատանքը, որ երբևէ կանեք, կլինի ձեր իսկ տան պատերի ներսում» (*Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* [2000], 134): Սա ճշմարիտ է բոլորիս համար, իհարկե, բայց հատկապես զորեղ է, երբ մտածում ենք մայրերի և դուստրերի փոխհարաբերության մասին:

Մայրեր, սովորեցրեք ձեր դուստրերին, որ Աստծո հավատարիմ դուստրը խուսափում է մեկմեկու բամբասներու կամ դատելու գայթակությունից: Նավույում Սփոփող Միության մի քարոզում Չոզենֆ Սմիթը խորհուրդ տվեց քույրերին, որ «լնգուն անկառավարելի անդամ է, զսպեք ձեր լնգունները անպատեհ բաների մասին խոսելուց» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 455):

Վերջին տարիներին, թողարկվել

է հողվածների, գրքերի և կինոֆիլմերի մի շարք, որոնք գրվել են կանանց և աղջիկների մասին, ովքեր բամբասում են և ովքեր «ստոր» են: Սատանան միշտ փորձում է քայքայել կնոջ աստվածային էության ամենակարևոր տարրը՝ խնամք տանելու էությունը:

Մայր-դուստր փոխհարաբերությունն այն դեպքն է, երբ դուստրը սովորում է, թե ինչպես խնամի՝ լինելով խնամքի տակ: Նա սիրված է: Նա սովորում է և զգում իր փորձառության, թե ինչ է նշանակում ունենալ մեկին, որը բավականաչափ հոգ է տանում ուղղելու իրեն, միևնույն ժամանակ շարունակելով քաջակերել և հավատալ իրեն:

Հիշեք, քույրեր, Աստված է ողջ բարոյական և հոգևոր ուժի աղբյուրը: Մեզ մատչելի է այդ ուժը, երբ մտնում ենք ուխտերի մեջ Նրա հետ և պահում ենք այդ ուխտերը: Մայրեր, ուսուցանեք ձեր դուստրերին ուխտեր կապելու կարևորությունը, իսկ հետո ցույց տվեք, թե ինչպես պահել այդ ուխտերը այնպես, որ նրանք կամենան արժանի ապրել տաճար գնալու:

Այսօրվա աշխարհում դա նշանակում է խոսել ձեր դուստրերի հետ սեռական հարցերի շուրջ: Ձեր դուստրերը, ինչպես նաև ձեր որդիները հասունանում են մի աշխարհում, որը բացելիքաց ընդունում է վաղ, անփույթ և անմիտ անառակությունը: Անհամեստ, անմաքուր

կանայք ներկայացվում են որպես հմայիչ և շատ հաճախ հռչակավոր և օրինակելի: Չնայած կան քայլեր, որոնք մենք կարող ենք անել մեր տներում և ընտանիքներում նվազեցնելու մեր խոցելիությունը ժամանակակից ապրելակերպի այդ նողկալի տարրի դեմ, ձեր դուստրերը չեն կարող ամբողջապես խուսափել այդ գռնեհիկ սեռական ուղերձներից և հրապուրանքներից, որոնք շրջապատում են նրանց: Դուք պետք է հաճախ բաց քննարկումներ ունենաք, որոնց ընթացքում դուք պետք է սովորեցնեք ձեր դուստրերին ճշմարտությունը այս հարցերի վերաբերյալ:

Օրինակ, նրանք պետք է հասկանան, որ երբ նրանք կրում են խիստ նեղ, շատ կարճ, կամ շատ բաց հագուստ, նրանք ոչ միայն սխալ ուղերձներ են ուղարկում նրիտասարդ տղամարդկանց, որոնց հետ նրանք հաղորդակցվում են, այլ նաև հավերժացնում են իրենց իսկ մտքերում այն սխալմունքը, որ կնոջ արժեքը կախված է միմիայն նրա զգայական գրավչությունից: Սա երբեք չի եղել, ոչ էլ երբևէ կլինի Աստծո հավատարիմ դուստր արդար սահմանման մասը: Նրանք պետք է լսեն դա հստակ և պարբերաբար ձեր շուրթերից և նրանք պետք է տեսնեն դա ճշտորեն ձևավորված և հագուստի, հարդարանքի և համեստ ապրելակերպի ձեր սեփական հետևողական չափանիշներում:

Բոլոր նրիտասարդները հավանաբար ավելի շատ ուխտեր կկապեն և կպահեն, եթե նրանք սովորեն ճանաչել չոզու ներկայությունն ու ձայնը: Ուսուցանեք ձեր դուստրերին չոզու բաները: Նրանց ուշադրությունը հրավիրեք սուրբ գրությունների վրա: Տվեք նրանց փորձառություններ, որոնք կօգնեն նրանց փայլալի իրենց կյանքում քահանայության գործության օրհնությունը: Ուխտերը պահելու միջոցով, նրանք կսովորեն լսել Տիրոջ ձայնը և ստանալ անձնական հայտնություններ: Աստված իսկապես կլսի և կպատասխանի նրանց աղոթքներին: 2010 թվականի Միացյալ ժամի թեման վերաբերվում է ոչ միայն մեր նրիտասարդներին, այլ նաև մեզ բոլորին. «Չորացիր եւ քաջ եղիր, մի

վախենար եւ մի զարհուրիր. որով-
հետեւ քո Տեր Աստուածը քեզ հետ է
ամեն տեղ ուր որ գնաս» (Յեսու
Ա.9): Սա կտանի նրանց անվտանգ
դեպի Տիրոջ տան օրհնությունները:

Հավաստիացնք, թե նրանք ար-
դոք գիտե՞ն, որ ուխտերը պահելը
հավերժական երջանկության հաս-
նելու ամենաապահով ճանա-
պարհն է: Ե՛վ անհրաժեշտության
դեպքում սովորները նրանց, թե
ինչպես ապաշխարել և ինչպես
մնալ անբիծ և արժանի:

Այսպիսով, եթե սա ծանոթ է
հնչում, նղբայրներ և քույրեր, դա
այն պատճառով է, որ ես խոսում եմ
ծնողների և երեխաների հետ երեք
միմյանց հաջորդող գերագույն հա-
մաժողովների ընթացքում: Անցած
ապրիլին ես քաջալերեցի երիտա-
սարդներին «սովորել անցյալի դա-
սերը»: Այդ ելույթից ես մեջբերում
եմ. «Երբ կամենում եք լսել և սովո-
րել կյանքի ամենաիմաստալի ուս-
մունքներից մի քանիսը, սկսեք
նրանցից, ովքեր ձեզանից առաջ են
գնացել: ... Որքան ավելի լավ կլինի
ձեր կյանքը, եթե դուք հետևեք Քրիս-
տոսի հավատարիմ հետևորդների
ազնիվ օրինակին» (“Learning the
Lessons of the Past,” *Liabona*, May
2009, 31, 33).

Անցած հոկտեմբերի քահանա-
յության ժողովին իմ խոսքն ուղղ-
ված էր հայրերին և որդիներին,
իսկ այսօր ես մեծամասամբ խոսե-
ցի մայրերի և դուստրերի հետ: Յու-
րաքանցյուր դեպքում իմ ուղերձը
տարբեր է եղել, բայց նմանատիպ:
Հուսով եմ, դուք ականջ եք դնում և
տեսնում օրինակ ու լսում հաստա-
տուն, հետևողական ուղերձ, որ
այս վերջին օրերում կարևոր է,
նույնիսկ վճռորոշ, որ ծնողները և
երեխաները լսեն և սովորեն մի-
մյանցից: Սրանք ուղղակի տեսա-
կան սկզբունքներ չեն, որոնց մա-
սին ես խոսում եմ: Սրանք են
Աստծո ծրագրի էությունը, մեր հա-
վերժական երջանկության և խա-
ղաության կենտրոնը:

Եկեղեցին կօգնի, որտեղ կկարո-
ղանա: Մենք այստեղ ենք՝ աջակե-
ցելու և հաստատելու ձեզ որպես
ծնողներ և որպես զավակներ:
Բայց այսօր տունն ամենակարևոր
վայրն է՝ երիտասարդությանը
պատրաստելու վաղն առաջնորդել



ընտանիքներն ու Եկեղեցին: Մեզա-
նից յուրաքանչյուրիս վրա է դրված
որպես մայրեր և հայրեր անել այն
ամենը, ինչ մենք կարող ենք, որ
պատրաստենք մեր երիտասարդու-
թյանը լինել հավատարիմ, արդար
տղամարդիկ և կանայք: Տունն է այն
տեղը, որտեղ մենք պետք է ուսու-
ցանք ավտարանը պատվիրա-
նով և օրինակով:

Ես եզրափակում եմ իմ խորհուր-
դը Նախագահ Չոզեֆ Ֆ. Սմիթի
այս մարգարեական ամփոփումով.
«Մեր [ընտանեակային] հարաբերու-
թյունները նախատեսված չեն բա-
ցառապես այս կյանքի համար,
ժամանակի համար, որը մենք
տարբերակում ենք հավերժությու-
նից: Մենք ապրում ենք ժամանակի
և հավերժության համար: Մենք
մտերմություններ և հարաբերու-
թյուններ ենք ստեղծում ժամանակի

և ողջ հավերժության համար...
Ովքե՞ր են, բացի Վերջին Օրերի
Սրբերից, որ խորհում են այն միտ-
քը, որ գերեզմանից այն կողմ, մենք
կշարունակենք ընտանեկան կազ-
մով՝ հայր, մայր, երեխաներ ճա-
նաչելով մեկը մյուսին, ... ընտա-
նիք, որն Աստծո աշխատանքի մեծ
և կատարյալ կազմակերպության
մի միավոր է և նախասահմանված
է շարունակվելու ժամանակի և հա-
վերժության ամբողջ ընթացքում»
(*Teachings: Joseph F. Smith*, 385,
386):

Թող Աստված օրհնի մեզ, որ ու-
սուցանենք, խնամենք և պատրաս-
տենք մեկս մյուսին մեր տան
պատերի ներսում՝ այն մեծ աշխա-
տանքի համար, որ պետք է արվի
մեր բոլորի կողմից այժմ և ապագա-
յում, սա է իմ աղոթքը, Տեր Հիսուս
Քրիստոսի անունով, ամեն: ■